ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
2025-2026 ուստարի
11-12-րդ դասարաններ
(Տևողությունը՝ 3 ժամ)

❖ **Սիրելի՛ բարեկամ, կարդա՛ հատվածն ու կատարի՛ր առաջադրանքները: Հատվածը ներկայացված է ըստ Վարդգես Պետրոսյանի համանուն պատմվածքի: Մաղթում ենք հետաքրքիր ու արդյունավետ աշխատանք:**

ԿԵՍԳԻՇԵՐԱՅԻՆ ԶՐՈՒՅՑ

Պատուհանի ապակիները կամաց-կամաց կապտում են, հետո փոխվում մուգ մանուշակագույնի, հետո՝ համարյա սևանում: Հյուրանոցի իմ համարը շատ բարձր է, տասնվեցերորդ հարկում, քաղաքի լույսերը համարյա չեն զգացվում: Այսպես լավ է: Մենք կարոտում ենք հազար ու մի բանի, բայց մտածե՞լ ենք, որ ամենից շատ կարոտում ենք ինքներս մեզ, և ինչ հազվագյուտ մետաղ է դարձել մենակությունը: Մանավանդ հեռու, անծանոթ քաղաքում, երբ չկան ընկերներ, ազգականներ, բարեկամներ, թշնամիներ, լավ է փակվել հյուրանոցիդ համարում, նայել պատուհանից դուրս: Քանի տարի էր՝ ես մի կարգին չէի տեսել, թե ինչպես է մայր մտնում արևը. այսօր տեսա մանրամասն, եթե գրող լինեի կամ նկարիչ, կկարողանայի երևի նկարագրել: Այսօրվա արևը շատ հոգնած էր երևում. խեղճ արև, ամեն օր վեր է կենում նույն ժամին, աշխատում է նույն հավերժական բարեխղճությամբ, տիեզերքի այս տանջված-չարչարկված աշխատավորը: Քանի՜ միլիոն տարի նա դեռ կաշխատի, ո՞վ գիտե: Մենակությունը զարմանալի մտքեր է արթնացնում, որ այդ պահին հանճարեղ են թվում. երևի արվեստագետները դրա համար են մենակություն որոնում: Չգիտեմ: Դռան արանքից մի դեղին թել է կախված՝ միջանցքի լույսը… Դուռը ծեծում են: Ո՞վ կլինի Դե, իհարկե, մատուցողն է…

…Ես բաժակները լցնում եմ կարմիր գինով. մութի մեջ գույնը չի երևում, բայց ես պատվիրել եմ կարմիր գինի, երևի կարմիր է: Ես իմ բաժակը խփում եմ սեղանի մյուս ծայրին դրված բաժակին և մթության մեջ լսում եմ սեփական ձայնս.

- Քո կենացը, հայրի՛կ...

Այսօր հորս ծննդյան օրն է: Այսօր նա յոթանասունհինգ տարեկան պիտի դառնար, իսկ երեսունչորս տարի է՝ չկա: Մի քանի շաբաթ առաջ լրացավ իմ քառասունմեկը, ուրեմն հորս հետ արդեն հավասարվեցի: Նույնիսկ կարող եմ ասել, որ երկու-երեք շաբաթով մեծ եմ իմ հորից: Դե ինչ. կարող ենք հասակակից ընկերների պես նստել, խոսել, խմել իրար հետ: Որքան որ հնարավոր էր, ես հորս սիրած կերակուրները պատվիրեցի: Դրանք այդպես էլ կմնան սեղանին, և բարի, միամիտ մատուցողը՝ Շուրան, երբ որ գա՝ սեղանը հավաքելու, տխուր կզարմանա՝ չեկա՞վ… Ես հորս էի սպասում, Շուրա:

-Քո կենացը, հայրի՛կ:

Մեր բաժակները զնգում են, ես կում-կում խմում եմ նախ իմ գինին, հետո՝ հորս: Լավ գինի է, սառը: Հետո նորից լցնում եմ մեր բաժակները: Չգիտեմ որտեղ եմ կարդացել, թե մարդը իր մահից հետո շարունակում է ապրել առնվազն հարյուր տարի: Չի մեռնում այնքան, քանի դեռ կան-ապրում են մարդիկ, որ տեսել-իմացել են նրան, իսկ հետո՝ քանի դեռ ապրում են մարդիկ, որ նրա մասին լսել են ուրիշներից, որ տեսել-իմացել են նրան: Ուրեմն, հայրս դեռ ապրում է: Կապրի նաև ինձնից հետո, որովհետև ես որդուս շատ եմ պատմել հորս մասին: Փոքր ժամանակ Վահեն քեզ նկար-պապիկ էր ասում, հայրի՛կ, մի անգամ լաց եղավ, թե ինչու դու իրեն կարուսել չես տանում, խաղալիք չես առնում, ինչպես ուրիշ պապիկներն իրենց թոռնիկներին: «Չեմ ուզում նկար-պապիկ,- ասաց,- իսկական պապիկ եմ ուզում»: Հիմա նա մեծացել է, հասկացել ամեն բան, հիմա նա եկել է Մոսկվա՝ համալսարան ընդունվելու: Ասում են՝ դա քո երազն է եղել, որ ես համալսարան ավարտեմ և անպայման Մոսկվայի համալսարանը. չեղա՜վ… Դու չհասցրիր տեսնել նույնիսկ, թե ես ինչպես եմ գրում «ա» տառը: Խմե՛նք, հայրի՛կ: Քո կենացը: Ես հիշում եմ, թե գյուղի մեր բակում դու ինչպես էիր տրորում խաղողը, որ նախ պղտոր-կանաչագույն հյութ էր դառնում, հետո լցվում կարասները, դառնում գինի: Մենք գինուն հայրիկի «ոտի ջուր» էինք ասում, հիշո՞ւմ ես: Ես այսօրվա պես հիշում եմ:

Դու շատ զգուշորեն էիր տրորում խաղողը, կարծես ափսոսանքով, անբացատրելի մի տխրությամբ, բայց երևի խաղողի կյանքը շարունակվել կարող է միայն իբրև զինի, ուրեմն, պետք է տրորվի: Մարդու կյանքն էլ, երևի, գինի է, որ գոյանում է մանկություն-խաղողը տրորվելուց կյանքի ոտքերի տակ, որ քո ոտքերի պես բարի չեն, հայրի՛կ... Չէ՛, հայրիկ, ես գրող չդարձա, ճարտարապետ եմ, շենքեր եմ նախագծում, բարձր շենքեր, մարդկանց մոտեցնում եմ երկնքին, թեպետ երբեմն հենց սրանով է, որ նրանք հեռանում են երկնքից, որովհետև երկնքին մոտ լինելու համար պետք է մոտ լինել հողին: Կտրվում ենք հողից, հայրիկ: Դու ինչպե՞ս հասկացար դա դեռ այն ժամանակ և ամուր մնացիր քո հողին կպած: Մեր տանը դեռ ապրում են քո կարդացած գրքերը: Քո ստացած կրթությամբ, քո կարդացած գրքերով դու կարող էիր ուսուցիչ, փաստաբան, նույնիսկ գրող դառնալ, իսկ դու վերադարձար գյուղ և ձորի գլխին վերականգնեցիր հորդ փլված տունը: Ձեր տունը հող չուներ, լերկ, անպտուղ ժայռեր էին, որ թեք իջնում էին դեպի ձորը, դու աստիճան առ աստիճան պատեր շարեցիր, չգիտես որտեղից հող բերեցիր, լցրեցիր ժայռերի ու պատերի արանքը և այդ դարավանդների վրա ծառեր տնկեցիր, խաղող, ծաղիկներ: Հիմա դրանք վիթխարի ծառեր են, թեպետ տունը մերը չէ: Դու կարող էիր բանաստեղծություններ և գրքեր թարգմանել, բայց դու խաղող տնկեցիր ժայռերի մեջ, դեղձ, ծիրան, սալոր աճեցրիր: Մեր տան պատերից երևի շատ վաղուց են ջնջվել մեր հետքերը, քո հետքերը, հայրիկ, բայց մի տխրիր դրա համար. քո ծառերն ապրում են և հիմա էլ բերք են տալիս: Ես հաճախ եմ գյուղ գնում, կանգնում եմ մեր գետի հին կամրջին, երկար նայում եմ մեր տանը, հեռվից եմ նայում՝ չեմ կարողանում ներս մտնել, թեպետ նոր տանտերը լավ մարդ է, միշտ ներս է հրավիրում: Նա իր տուն է հրավիրում, բայց ինձ թվում է, եթե մտնեմ, կկորցնեմ մեր տունը, քո տունը: Իսկ քո ծառերն ապրում են. ծառերը չեն նորոգում, չեն ներկում ուրիշ գույնով, շատ-շատ փտում են հին, չորացած ճյուղերը, իսկ նոր ճյուղերը կրկնում են հինը, ծառերն ավելի հավատարիմ են իրենց բնությանը, քան մարդիկ:

- Քո կենացը, հայրի՛կ:

Գինին տխրություն և հուշեր է արթնացնում իմ մեջ, իսկ քո թոռը՝ իմ որդին, ուզում է գրող դառնալ: Չգիտեմ, կդառնա՞: Նա պիտի նախ ավարտած լիներ ծառերի, քարերի համալսարանը, հետո նոր՝ Մոսկվա գար: Նա գրքեր է կարդացել, նա կարող է տեղը-տեղին նկարագրել քաղաք, բնություն, սեր, ատելություն, բայց չգիտեմ՝ նա գրող կդառնա՞...

Դու չհասցրիր տեսնել, թե ես ինչպես եմ գրում «ա» տառը, իսկ ես, ահա, որդուս հետ եկել-հասել եմ այստեղ, որ նա մենակ ու անպաշտպան չզգա իրեն: Այդպես գրող դառնո՞ւմ են, այդպես որևէ բան դառնո՞ւմ են, հայրի՛կ: Ծառն ինքը պիտի կարողանա դիմանալ-ապրել՝ կռվել քամու դեմ, ծարավի դեմ, որդերի դեմ, որ կրծում են նրա արմատները: Ծառն ինքը: Իմ որդին անզոր է ու գրագետ, չգիտեմ, նա ծառ կդառնա՞... Տեսնո՞ւմ ես, ամեն բան հասկանում եմ, բայց նրա պոչը բռնած թռել-եկել եմ երկու հազար կիլոմետր ու վաղը, մյուս օրը սրտաղող քարշ եմ գալու համալսարանի պատերի տակ. ի՞նչ կստանա...

Դու շատ շուտ գնացիր, հայրի՛կ, ես նույնիսկ չհասկացա, որ դու գնում ես. վեց տարին կարճ ճանապարհ էր մահը հասկանալու համար, ինչո՞ւ այդքան շտապեցիր, հայրի՛կ...

…Ների՛ր, հայրի՛կ, որ տխուր բաներ եմ մտաբերում: Դու հիմա մորիցս երիտասարդ ես քառասուն տարով, մորս եթե հիմա տեսնես, չես ճանաչի: Մայրս ասում է, որ ես քեզ շատ եմ նման, քո նկարներն էլ, երբ նայում եմ, ինձ թվում է՝ նման եմ: Ծիծաղելի մի բան ասեմ. քեզ նման ես էլ եփած սոխ չեմ ուտում, զարմանալի բան է, չէ՞, մարդը. որտեղի՞ց է անցել-մնացել քո այդ գիծն իմ մեջ: Ես նաև վախենում եմ մարդկային ստորությունից, գլուխս կորցնում եմ: «Իսկական հայրդ ես,- դժգոհում է մայրս,-վախկոտ, բամբակի պես փափուկ մարդ էր. ով ուզեր, կտրորեր»: Ի՞նչ անեմ, հայրի՛կ, քա՞ր դնեմ բամբակի մեջ: Մեծ եղբայրս, պատմում են, մի անգամ երես առ երես ստորության է հանդիպել, եկել պատմել է քեզ, խորհուրդ հարցրել՝ ի՛նչ անել, ինչպե՛ս կռվել: «Դո՛ւ ազնիվ մնա, որդի՛ս,-ասել ես,-ստորների հենց ուզածն է, որ դու կռվես, ուրեմն և հավասարվես իրենց, և ուրեմն մեկով պակասի ազնիվ մարդկանց թիվը: Ո՞նց պիտի կռվես ստորության դեմ, ստորությա՞մբ: Դո՛ւ ազնիվ մնա, որդի՛ս»: Ա՞յդ բառերն ես ասել: Չգիտեմ: Երբ նայում եմ նկարի քո աչքերին, հավատում եմ, որ հենց ա՛յդ բառերն ես ասել: Քո աչքերը ամբողջ կյանքում նայել են միայն երկնքի, հողի, խաղողի ու վշտի են նայել. վախեցե՞լ են, ո՛չ, չեն ուզեցել նայել ստորության: Այդպես կարելի՞ է ապրել, հայրի՛կ, այդպես ես կարո՞ղ եմ խորհուրդ տալ որդուս, եթե մի օր նա երես առ երես հանդիպի ստորության: Չգիտեմ:

Առաջադրանքներ հատվածի շուրջ

1. Մեկնաբանի՛ր, թե ինչ խորհրդանշական իմաստ են ստանում բնության պատկերները ստեղծագործության մեջ, և հատկապես որ միտքն է հիմնավորում այդ գաղափարը: **5 մ.**
2. Կարծի՛ք հայտնիր, թե ինչ է խորհրդանշում ծառի կերպարը, և ինչու է հեղինակը այն կապում մարդու ձևավորման գաղափարի հետ: **5 մ.**
3. Բացատրի՛ր, թե ինչպես է համեմատվում մարդու կյանքի հետ խաղողի՝ գինի դառնալու գործընթացը: **5 մ.**
4. Ցո՛ւյց տուր, թե ինչ է խորհրդանշում արևը հատվածում, և ինչպես է այն կապվում մարդու կյանքի և աշխատանքի գաղափարի հետ: **5 մ.**
5. Ներկայացրո՛ւ որդու՝ հայրական տուն չմտնելու իրական պատճառը, ինչպես նաև նրա հոգեվիճակը: Կարծի՛ք հայտնիր, թե որքանով է այդ հոգեվիճակը «հարազատ» այսօրվա մարդուն: Խոսքդ հիմնավորի՛ր դիպուկ օրինակներով: **10 մ.**
6. Հիմք ընդունելով որդու վերհուշը՝ ներկայացրո՛ւ հոր կերպարի բարոյական դիմանկարը: Մեկնաբանի՛ր հոր խորհուրդը որդուն և արտահայտի՛ր քո դիրքորոշումն այդ խորհրդի վերաբերյալ: Մի օր ի՞նչ խորհուրդ կտաս որդուդ, եթե նա երես առ երես հանդիպի ստորության: **10 մ.**

Առավելագույն միավորը՝ 40:

Միավոր չի տրվում հետևյալ դեպքերում.

- Պատասխանն ամբողջությամբ վերաշարադրանք է:
- Գաղափարը չի բխում տրված նյութից:

❖ **Գրի՛ր ստեղծագործական-վերլուծական շարադրանք Ռազմիկ Դավոյանի «Կեղևդ բա՛ց արա» բանաստեղծության շուրջ:**

ԿԵՂԵՎԴ ԲԱ՛Ց ԱՐԱ

Բա՛ց քո կեղևը, ծառ,
Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ…

Անցան օրեր մեկ-մեկ,
Անցան օրեր զույգ-զույգ,
Ճաշակեցինք և՛ սեր,
Ե՛վ տառապանք, և՛ սուգ:

Հոգնեցրին ինձ արդեն
Օրերը լայն ու նեղ,
Հոգնեցրին ինձ արդեն
Մեղավոր ու անմեղ,
Հոգնեցրին ինձ արդեն
Տխրությունն այս ցանցառ
Եվ կարոտներն այս խեղճ.-
Դե բաց կեղևդ, ծա՛ռ,
Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ:

Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ.-
Այս անծաղիկ դարում
Ես կձուլվեմ քեզ հետ՝
Որպես փոքրիկ գարուն:

Որպես թաքուն թախիծ,
Տերևներիդ խորքում
Ես կփայլեմ տխուր
Ու կմտնեմ խոր քուն:

Ու հողմերը թե գան՝
Ինձ խլեն քո ձեռքից,
Ես կարթնանամ, ծա՛ռ իմ,
Կորոտանք մեկից:

Ես կձգվեմ քեզ հետ,
Ես կճկվեմ քեզ հետ
Ու հողմերի ձեռքից
Ես կփրկվեմ քեզ հետ:
Ու մի թաքուն գիշեր,
Երբ բոլորը քնեն,
Ես քեզ կախարդական
Բառեր կկրկնեմ.

Կերթանք կամա՛ց-կամա՛ց,
Կելնենք թաքու՛ն-թաքու՛ն,
Ու քնի մեջ նրան
Կդարձնենք անքուն:

Նրա երազի մեջ
Կախարդական մի ծառ
Մարդկային ձև կառնի,
Կշնկշնկա կամաց,
Եվ մարդկային լեզվով,
Որպես լեգենդ պայծառ,
Կբարբառի նրան
Անհու՛ն, կորած մի սեր
Եվ մի կարոտ անծայր:

Հետո կամաց-կամաց,
Ցավով մեր շողշողուն,
Որպես կորած տեսիլք՝
Մենք կթաղվենք հողում:

Առավելագույն միավորը՝ 10։

Շարադրանքդ կարժանանա առավելագույն միավորի, եթե՝

1. Ըմբռնել ես բանաստեղծության հիմնական թեման, գաղափարը, կարողացել ես վերաձևակերպել և քո բառերով ներկայացնել բանաստեղծի ասելիքը։
2. Կիրառել ես հարուստ բառապաշար և պատկերավորման միջոցներ, կարողացել ես բանաստեղծի գործածած արտահայտչամիջոցները քո շարադրանքում կիրառել նորովի։
3. Վերլուծել ես բանաստեղծությունը, անդրադարձել ես բանաստեղծության խորհրդանիշին։
4. Արժևորել և գնահատել ես բանաստեղծությունը, հիմնավորել ես քո վերաբերմունքը։ Դրսևորել ես երևակայություն և ստեղծագործական մոտեցում։
5. Շարադրանքդ լեզվական առումով անթերի է. տեղին և գրագետ ես կիրառում հայերենի ոճական և քերականական առանձնահատկությունները։

Ուշադրություն

Բոլոր առաջադրանքների շարադրանքներից միավոր է հանվում նաև, երբ առկա են.

- ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- բառագործածության ու շարադասական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- մտքի ձևակերպման սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- հարակից սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար)։

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան